ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վարդենիս **11/02/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 23 անդամներ:

Բացակա էին՝ Հայկ Երանոսյանը, Արտակ Մանուկյանը, Նաիրա Մանուչարյանը, Արամ Մելքոնյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ահարոն Խաչատրյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Զարոյանը

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ <<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 168-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ ու 34-րդ հոդվածների դրույթներով և ելնելով անհրաժեշտությունից՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Վարդենիս համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 14-ի <<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 168-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝ որոշման 1-ին կետի <<:>> կետադրական նշանից հետո լրացնել <<(Լիազորել՝ <<Ահարոն Խաչատրյան>> խմբակցության ավագանու անդամ Նելլի Խաչատրյանին և

<<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության ավագանու անդամ Արմինե Աղաջանյանին՝ համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու համար)>> բառերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ խոսքը վերաբերում է ՓոքրՄասրիկ բնակավայրի հողատեսքերը վարձակալության տրամադրելու մասին 2002 թվականի հունիսի 8-ին անցկացված մրցույթներն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատարան հայտ ներկայացնելուն: Անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով լիազորել ավագանու երկու անդամներին՝ համայնքային շահերը դատարանում պաշտպանելու համար:

Ուստի առաջարկեց Վարդենիս համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 14-ի <<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 168-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝ որոշման 1-ին կետի <<վերջակետ>> կետադրական նշանից հետո լրացնել <<(Լիազորել՝ <<Ահարոն Խաչատրյան>> խմբակցության ավագանու անդամ Նելլի Խաչատրյանին և <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության ավագանու անդամ Արմինե Աղաջանյանին՝ համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու համար)>> բառերը:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 28-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VAZ 2121 ՄԱԿՆԻՇԻ 35LS476 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է

Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի բնակիչ Ծովինար Հովսեփյանին պատկանող VAZ 2121 ՄԱԿՆԻՇԻ 35LS476 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 200921 /երկու հարյուր հազար ինը հարյուր քսանմեկ / ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 56921/հիսուն վեց հազար ինը հարյուր քսան

մեկ/ ՀՀ դրամ տույժը և մայր գումարից քսան տոկոս՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ ընդհանուր գումարըկազմում է 200 հազար 921 ՀՀ դրամ, որից մայր գումարը՝144 հազար ՀՀ դրամ, տույժը՝ 56 հազար 921 ՀՀ դրամ: Առաջարկում եմ զիջել տույժը և մայր գումարից քսան տոկոս՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 27-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՌԱՖԱՅԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է

1. Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի բնակիչ Ռաֆայել Վարդանյանին պատկանող անշարժ գույքի գույքահարկի մասով կուտակված 201667/երկու հարյուր մեկ հազար վեց հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 58321/հիսունութ հազար երեք հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամ տույժը՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ ընդհանուր գումարը կազմում է 201 հազար 667 ՀՀ դրամ, որից մայր գումարը՝ 143 հազար 346 ՀՀ դրամ, տույժը՝ 58 հազար 321 ՀՀ դրամ: Առաջարկում եմ զիջել տույժը՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 26-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՑԱԽ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ BMW X5 4.4 I ՄԱԿՆԻՇԻ 70XM717 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է

Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի բնակիչ Արցախ Հակոբյանին պատկանող BMW X5 4.4 I ՄԱԿՆԻՇԻ 70XM717 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 810989 /ութ հարյուր տաս հազար ինը հարյուր ութսունինը / ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 90801/իննսուն հազար ութ հարյուր մեկ/ ՀՀ դրամ տույժը և մայր գումարից երեսունհինգ տոկոս՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ ընդհանուր գումարը կազմում է 810 հազար 989 ՀՀ դրամ, որից մայր գումարը՝ 720 հազար 188 ՀՀ դրամ, տույժը՝ 90 հազար 801 ՀՀ դրամ: Առաջարկում եմ զիջել տույժը և մայր գումարից 15 տոկոս՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը՝ նշելով, որ Արցախ Հակոբյանը զինծառայող է, պատերազմի մասնակից, Արիության մեդալակիր և առաջարկեց զիջել 35 տոկոս:

Համայնքի ղեկավարը առաջարկեց զիջել տույժը և մայր գումարից 35 տոկոս:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 25-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՄԱԲԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱԻԴԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VOLKSWAGEN TOUAREG ՄԱԿՆԻՇԻ 36DD575 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է

Վարդենիս համայնքի ԳԵՂԱՄԱԲԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱԻԴԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VOLKSWAGEN TOUAREG ՄԱԿՆԻՇԻ 36DD575 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 68000 վաթսունութ հազար / ՀՀ դրամ ապառքը օրենքով սահմանված կարգով զիջել:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը՝ նշելով, որ ընդհանուր գումարը կազմում է 68 հազար ՀՀ դրամ, նշեմ նաև, որ Աիդա Հակոբյանը ևս 44-օրյա պատերազմում զոհված հերոսի ծնող է, առաջարկում եմ զիջել ընդհանուր ապառքը՝ 68 հազար ՀՀ դրամը:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 24-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՄԱԲԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՂԻՆԱԿ ԱՆԴՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ KIA SPORTAGE ՄԱԿՆԻՇԻ 35FN864 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԵՎ OPEL VECTRA ՄԱԿՆԻՇԻ 37UN 816 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ և 230-րդ հոդվածի 3-րդ կետերով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է

1. Վարդենիս համայնքի ԳԵՂԱՄԱԲԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՂԻՆԱԿ ԱՆԴՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ KIA SPORTAGE ՄԱԿՆԻՇԻ 35FN864 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԵՎ OPEL VECTRA ՄԱԿՆԻՇԻ 37UN 816 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ

ավտոմեքենաների գույքահարկի 21100 /քսանմեկ հազար մեկ հարյուր/ և 05-022-0006-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի 1396/մեկ հազար երեք հարյուր հիննսունվեց/ՀՀ դրամ ապառքը օրենքով սահմանված կարգով զիջել:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ Վաղինակ Անդրյանը 44-օրյա պատերազմում զոհված հերոսի ծնող է,նրա ավտոմեքենաների ընդհանուր ապառքը կազմում է 21 հազար 100 ՀՀ դրամ, իսկ անշարժ գույքի ապառքը՝ 1396 ՀՀ դրամ: Առաջարկում եմ զիջել ընդհանուր գումարը՝ 22 հազար 496 ՀՀ դրամ:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 23-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՊԱՀԼԱՎՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VAZ 21053 ՄԱԿՆԻՇԻ 35LS097 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի Խաչաղբյուր բնակավայրի բնակիչ Պահլավուն Խաչատրյանին պատկանող VAZ 21053 մակնիշի 35LS097 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 181356/մեկ հարյուր ութսունմեկ հազար երեք հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 50456/հիսուն հազար չորս հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ տույժը և մայր գումարից հիսուն տոկոս՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ ընդհանուր գումարը կազմում է 181 հազար 356 ՀՀ դրամ, որից մայր գումարը՝ 130 հազար 900 ՀՀ դրամ, տույժը՝ 50 հազար 456 ՀՀ դրամ: Առաջարկում եմ զիջել տույժը և մայր գումարից հիսուն տոկոս՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 22-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅԱՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԻՑ ՀԱՄՅԱՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Ակունք բնակավայրի ղեկավարի գրությունը և համայնքի ղեկավար առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է

Տալ համաձայնություն Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի եկեղեցուն կից՝ համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար

Թույլատրել համայնքի ղեկավարին բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար համայնքի վարչական բյուջեի 4251 ընթացիկ նորոգման ծախսերից հատկացնել համաձայն ներկայացված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի (ծրագրի արժեքը կազմում է 1 800 000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ առաջարկեց տալ համաձայնություն Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի եկեղեցու հարակից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի բարեկարգման աշխատանքներ իրականացնելուն:

Համայնքի վարչական բյուջեի 4251 ընթացիկ նորոգման ծախսերի հաշվին, առաջարկում եմ թույլատրել բարեկարգման աշխատանքների իրականացումը՝ ըստ ներկայացված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի, որտեղ ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 5 միլիոն 564 հազար 730 ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը առաջարկեց 5564730 (հինգ միլիոն հինգ հարյուր վաթսունչորս հազար յոթ հարյուր երեսուն) դրամի փոխարեն տրամադրել 1800000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար/ դրամ, մանացածը կֆինանսավորվի բարերի կողմից,իսկ եթե բարերարը հրաժարվի, ապա նորից կներկայացնենք ավագանու քննարկման գումար վաելացնելու համար:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 21-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 76, 77 և 94-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս քաղաքի 05-005-0411-0054 ծածկագրով 1,5հա գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

2.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս քաղաքի 05-005-0411-0053 ծածկագրով 1հա գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

3.Հաստատել վարձակալության տրամադրվող՝ 4-րդ կարգի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար 3900 (երեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ ինչպես գիտեք Վարդենիս համայնքում շարունակվում են իրականացնել հողերի չափագրման աշխատանքներ, որի արդյունքում էլ ի հայտ են եկել երկու վարելահողեր, որոնք վարձակալությամբ տրված չեն եղել:

Առաջարկեց տալ համաձայնություն՝ Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս քաղաքի 1,5հա և 1 հա գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի վարելահողերը տրամադրելու վարձակալության մրցույթային կարգով՝ 25 տարի ժամկետով, երկու 4-րդ կարգի վարելահողերի համար էլ տարեկան մեկնարկային գինը սահմանելով՝ 1 հա-ի համար 3 հազար 900 ՀՀ դրամ:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 20-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 67-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 7 սեպտեմբերի 2023 թվականի N 1517-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին՝

1.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Լուսակունք բնակավայրի 2-րդ փողոց 8/6 հասցեի (ծածկագիր 05-043-0001-0003, սեփականության իրավունքի վկայական N 16012025-05-0047) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների 2,0 հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

1 . 1 Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 50%-ի չափով՝ 1քմ-ի համար 108.9 (մեկ հարյուր ութ ամբողջ ինը) ՀՀ դրամ (18-րդ գոտի):

2.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Լուսակունք բնակավայրի 05-043-0001-0006 կադաստրային ծածկագրով (սեփականության իրավունքի վկայական N 09092020-05-0027) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների 2,75077հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

2 . 1 Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 50%-ի չափով՝ 1քմ-ի համար 108.9 (մեկ հարյուր ութ ամբողջ ինը) ՀՀ դրամ (18-րդ գոտի):

3.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Գեղամասար բնակավայրի Կենտրոնական խճուղի 78 հասցեի (ծածկագիր 05-023-0001-0040, սեփականության իրավունքի վկայական N 03122024-05-0022) բնակավայրի նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության 0,10844հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

3.1 Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 1քմ-ի համար 141,9 (մեկ հարյուր քառասունինը ամբողջ ինը) ՀՀ դրամ (19-րդ գոտի):

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկվարը՝ նշելով, որ բյուջեով նախատեսված համապատասխան հոդվածի մուտքային մասն ապահովելու համար՝

Առաջին կետով՝ Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Լուսակունք բնակավայրի 2-րդ փողոց 8/6 հասցեի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների

2,0 հա հողամասը օտարելու աճուրդ-վաճառքի միջոցով՝մեկնարկային գինը սահմանելով կադաստրային արժեքի 50%-ի չափով՝ 1քմ-ի համար 108.9 ՀՀ դրամ (18-րդ գոտի):

Երկրորդ կետով՝ Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Լուսակունք բնակավայրի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների 2,75077 հա հողամասը օտարելու աճուրդ-վաճառքի միջոցով՝մեկնարկային գինը սահմանելով կադաստրային արժեքի 50%-ի չափով՝ 1քմ-ի համար 108.9 ՀՀ դրամ (18-րդ գոտի):

Երրորդ կետով՝ Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Գեղամասար բնակավայրի Կենտրոնական խճուղի 78 հասցեի բնակավայրի նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության 0,10844 հա հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով՝ մեկնարկային գինը սահմանելով կադաստրային արժեքի չափով՝ 1քմ-ի համար 141,9 ՀՀ դրամ (19-րդ գոտի):

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 19-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՃԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-041-0027-0027 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 89-
րդ հոդվածներով և հիմք ընդունելով Ղազարոս Սաֆարյանի, Եթեր Սաֆարյանի, Արտյոմ Սաֆարյանի, Հայկանուշ Սաֆարյանի և Պարգև Սաֆարյանի լիազորված անձի՝ Լյովա Անդրանիկի Գևորգյանի դիմումը համայնքի ավագանին որոշում է.

1.Ընդունել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական տարածքում գտնվող՝ Ղազարոս Սաֆարյան Պարգևի, Եթեր Սաֆարյան Մյասնիկի, Արտյոմ Սաֆարյան Ղազարոսի, Հայկանուշ Սաֆարյան Ղազարոսի և Պարգև Սաֆարյան Ղազարոսի՝ համասեփականատերերի սեփականություն հանդիսացող մարզ Գեղարքունիքի, համայնք Վարդենիս, Լճավան բնակավայրի 05-041-0027-0027 կադաստրային ծածկագրով՝10-րդ փողոց 10/2 հասցեի 0,03276հա հողամասի նվիրաբերությունը՝ Վարդենիս համայնքին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը առաջարկելով ընդունել Ղազարոս Պարգևի Սաֆարյանին, Եթեր Մյասնիկի Սաֆարյանին, Արտյոմ Ղազարոսի Սաֆարյանին, Հայկանուշ Ղազարոսի Սաֆարյանին և Պարգև Ղազարոսի Սաֆարյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող. Վարդենիս համայնքի , Լճավան բնակավայրի 10-րդ փողոց 10/2 հասցեում գտնվող 0,03276 հա հողամասի նվիրաբերությունը Վարդենիս համայնքին՝ Լճավան բնակավայրի մանկապարտեզի տարածքը ընդլայնելու նպատակով, համաձայն համասեփականատերերի դիմումի:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 18-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-005-0167-0102 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,003ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ Ի ԴԵՄՍ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 89-րդ հոդվածներով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի գլխավոր քարտուղարի գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի սեփականություն հանդիսացող 05-005-0167-0102 կադաստրային ծածկագրով՝ քաղաք Վարդենիս Հ. Արզոյան փողոց 16/1 հասցեի 0,003հա հողամասը (սեփականության իրավունքի վկայական՝ թիվ 06022024-05-0049 տրված 06.02.2024թ) նվիրել՝ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Ջրային Կոմիտեին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը և առաջարկեց տալ համաձայնություն Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի սեփականություն հանդիսացող ՝ քաղաք Վարդենիս Հ. Արզոյան փողոց 16/1 հասցեի 0,003 հա հողամասը նվիրել՝ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Ջրային Կոմիտեին՝ պոմպակայանի կառուցման նպատակով:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 17-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՒԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-057-0008-0001 ԵՎ 05-057-0009-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԱՆՀԱՅՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 ապրիլի 2021 թ.-ի N 698-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ Վարդենիս համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի Կութ բնակավայրի 05-057-0008-0001 կադաստրային ծածկագրով 0,07728 հա և 05-057-0009-0009 կադաստրային ծածկագրով 0,17793 հա անհայտ հողամասերը ճանաչել որպես Վարդենիս համայնքի սեփականություն:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ Վարդենիս համայնքի Կութ բնակավայրում առկա են 0,07728 հա 0,17793 հա անհայտ հողամասեր, կատարվել է չափագրման աշխատանքներ, առաջարկում եմ տալ Ձեր համաձայնությունը՝ տվյալ հողատեսքերը ճանաչել որպես Վարդենիս համայնքի սեփականություն:

Նիստերի դահլիճից դուրս եկավ ավագանու անդամ Արման Մաթևոսյանը:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 16-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՁՄԵՌԱՅԻՆ 2-ՐԴ ԽԱՂԵՐԻՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 47-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.2025 թվականի Համահայկական ձմեռային 2-րդ խաղերին Վարդենիս համայնքի պատվիրակության և մարզիկների մասնակցությունն ապահովելու նպատակով համայնքի բյուջեի սպորտմիջոցներ հոդվածից տրամադրել ընդհանուր 850000 /ութ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, որից՝ 230000 /երկու հարյուր երեսունհազար/ 10 շքերթային հագուստի հավաքածու ձեռք բերելու համար, 620000 /վեց հարյուր քսան հազար/ դրամը՝ սննդի և այլ ծախսերը հոգալու համար՝ համաձայն հաշիվ-ապրանքագրի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ 2025 թվականի փետրվարի 1-ից 7-ը Ջերմուկ քաղաքում կայացած Համահայկական ձմեռային 2-րդ խաղերին Վարդենիս համայնքի պատվիրակության և մարզիկների մասնակցությունն ապահովելու նպատակով համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից թույլատրել տրամադրել ընդհանուր առմամբ 850 հազար ՀՀ դրամ, որից 230 հազարը՝ 10 շքերթային հագուստի հավաքածու ձեռք բերելու համար, 620 հազար ՀՀ դրամը՝ սննդի և այլ ծախսերը հոգալու համար՝ համաձայն հաշիվ-ապրանքագրի:

Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը առաջարկելով գումարի չափը նշել նախագծում /850000 ութ հարյուր հիսուն հազար/:

Հարցով հանդես եկավ ավագանու անդամ Կարեն Սիմոնյան թե ինչու հարցը նախորդ արտահերթ նիստին չի ներկայացվել քննարկման , որին ի պատասխան ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը պատասխանեց, որ արտահերթ նիստին քննարկվել են միայն բյուջեին առնչվող հարցեր, իսկ ավագանու անդամ Կարեն Մկրտչյանը նշեց, որ արտահերթ նիստի ժամանակ հստակ գնային ինֆորմացիա չի եղել:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 15-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃԸ ԿԱՀԱՎՈՐԵԼՈՒ և ՈՐԱԿՅԱԼ ՈՒ ՊԱՏՇԱՃ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ և 37-րդ հոդվածների դրույթներով և հաշվի առնելով <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ղեկավար՝ ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

Վարդենիս համայնքի ավագանու նիստերի դահլիճը կահավորելու և որակյալ ու պատշաճ հեռարձակում ապահովելու նպատակով համայնքային բյուջեի 5122 հոդվածից հատկացնել 4880000 ՀՀ դրամ՝ գնման ընթացակարգով անհրաժեշտ գույքեր և սարքավորումներ ձեռք բերելու համար:

1. 9 հատ 3 մետրանոց սեղան ավագանու անդամների համար

2. 1 հատ 1.6 մետրանոց սեղան համայնքի ղեկավարի համար

3. 1 հատ 1.2 մետրանոց սեղան աշխատակազմի քարտուղարի համար

4. 40 հատ աթոռ

5. 1 հատ ամբիոն զեկույցները ներկայացնելու համար

6. 37 հատ բարձրախոս

7. Բարձրախոսների հեռակառավարման վահանակ

8. Աուդիո խառնիչ

9. Տեսանկարահանող սարք

Հարցը ներկայացրեց <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը՝ նշելով, որ նիստերի դահլիճը պատշաճ կերպով

կահավորված չէ և առկա են որոշակի տեխնիկական խնդիրներ, որոնք առնչվում են ազգաբնակչությանը, հեռարձակումը կատարվում է հեռախոսի միջոցով, ձայնի խափանումներ են լինում, լինում են հաղորդագրություններ և զանգեր, որոնք ազդում են նիստի հեռարձակման ձայնի և որակի վրա: Ուստի առաջարկեց համաձայն ՏԻՄ օրենքի՝ ավագանու խմբակցությունների համար պետք են սեղաններ, համայնքի ղեկավարը պետք է ունենա իր առանձին սեղանը, որպեսզի նիստը վարի և նաև պետք է հնարավորություն ունենա ձայնը միացնելու և անջատելու, անհրաժեշտ է տեսանկարահանող սարք, որը կապահովի ուղիղ հեռարձակում, և որի վրա զանգեր և հաղորդագրություններ չեն գա ինչը չի ազդի որակի վրա և ամենից զատ պետք է ունենալ ամբիոն, որի մոտ ելույթ կունենան զեկուցողները, նախատեսվում է նաև բարձրախոսներ՝ յուրաքանչյուր ավագանու անդամին: Այս ամենի համար նախնական հաշվարկներով նախատեսվում է 4880000/չորս միլիոն ութ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ, սակայն մրցույթ հայտարարելուց հնարավոր է արժեքների փոփոխություններ: Ինչպես նաև ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը նշեց, որ աշխատակազմին վերաբերվող տեխնիկական թերություն է առկա՝ նախագծում նշվել է Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը փոխարենը <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ղեկավարի առաջարկը, առաջարկեց կատարել փոփոխություն և ընդունել հարցը:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 14-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌ 01/07/2024Թ. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարություն 2000թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջները՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել՝ Վարդենիս համայնքի առ 01/07/2024թ-ի հողային հաշվեկշիռը համաձայն ձևաչափի:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը և առաջարկեց հաստատել 01/07/2023 թվականից առ 01/07/2024թ-ի Վարդենիս համայնքի հողային հաշվեկշիռը՝ համաձայն ձևաչափի:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 13-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 32-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի 2024թվականի նոյեմբերի 4-ի N 327-Ա կարգադրությամբ ստեղծված գույքագրման հանձնաժողովի կողմից ներկայացված գույքագրման արդյունքները համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Վարդենիս համայնքի և ենթակա կազմակերպությունների ամենամյա գույքագրման արդյունքները՝ համաձայն հավելվածների:

Հարցը ներկայացրեց հաայնքի ղեկավարը՝ նշելով, որ գույքագրման հանձնաժողովի կողմից ներկայացված գույքագրման արդյունքների հիման վրա՝ Վարդենիսի համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների ու բյուջետային հիմնարկների ամենամյա գույքացանկը, համաձայն հավելվածների:

Հարցի ընթերցման ժամանակ նիստերի դահլիճից դուրս եկավ ավագանու անդամ Արաքսյա Հայրապետյանը:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 12-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի զեկուցումը Վարդենիս համայքի 2024 թվականի

տարեկան բյուջեի կատարողականը՝ համաձայն հավելվածների:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար՝ նշելով, որ Վարդենիս համայնքի 2024 թվականի բյուջեով նախատեսված 6 միլիարդ 29 միլիոն 183 հազար 900 հ/դ եկամուտների պլանի դիմաց փաստացի կատարվել է 4 միլիարդ 387 միլիոն 664 հազար 200 հ/դ կամ բյուջեն կատարվել է 72.8 տոկոսով:

Վարչական բյուջեի 2024թ տարեկան պլանը կազմում է 2 միլիարդ 703 միլիոն 40 հազար 700 հ/դ փաստացի կատարվել է 2 միլիարդ 780 միլիոն 703 հազար 600 հ/դ կամ 102.9տոկոս:

Սեփական ամրացված եկամուտների 2024թ տարեկան պլանը կազմում է 529 միլիոն 518 հազար 600հ/դ, որի դիմաց փաստացի կատարվել է 607 միլիոն 835 հազար 500հ/դ կամ 114.8տոկոս:

Վարդենիս համայնքի 2024 թվականի ընդհանուր բյուջեի տարեկան ծախսերը պլանավորվել է 6 միլիարդ 171 միլիոն 384 հազար 800 հ/դ ,փաստացի ծախսվել է 3 միլիարդ 777 միլիոն 118 հազար 900 հ/դ

Առավել մանրամասն ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 14 կողմ, 0 դեմ, 9 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-9

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 11-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել՝ 2025 թվականի փետրվարի 11-ին ժամը 14:00-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը՝ բաղկացած 18 հարցից.

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2.ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ

ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌ 01/07/2024Թ. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃԸ ԿԱՀԱՎՈՐԵԼՈՒ և *ՈՐԱԿՅԱԼ ՈՒ ՊԱՏՇԱՃ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՅՈՒՋԵԻՑ* ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5.ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՁՄԵՌԱՅԻՆ 2-ՐԴ ԽԱՂԵՐԻՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6.ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՒԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-057-0008-0001 ԵՎ 05-057-0009-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԱՆՀԱՅՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-005-0167-0102 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,003ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ Ի ԴԵՄՍ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

8.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՃԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-041-0027-0027 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

10.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅԱՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԻՑ ՀԱՄՅԱՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

12.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՊԱՀԼԱՎՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VAZ 21053 ՄԱԿՆԻՇԻ 35LS097 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՋԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՄԱԲԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՂԻՆԱԿ ԱՆԴՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ KIA SPORTAGE ՄԱԿՆԻՇԻ 35FN864 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԵՎ OPEL VECTRA ՄԱԿՆԻՇԻ 37UN 816 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՋԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՄԱԲԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱԻԴԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VOLKSWAGEN TOUAREG ՄԱԿՆԻՇԻ 36DD575 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՋԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՑԱԽ

ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ BMW X5 4.4 I ՄԱԿՆԻՇԻ 70XM717 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՌԱՖԱՅԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VAZ 2121 ՄԱԿՆԻՇԻ 35LS476 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024Թ.-Ի <<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 168-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2025 թվականի փետրվարի 11-ին ժամը 14:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստը՝ ութերորդ նստաշրջանի առաջին նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 23-ը, բացակայում էին ավագանու անդամներ Արամ Մելքոնյանը, Արտակ Մանուկյանը, հարգելի բացակայում էին ավագանու անդամներ նաիրա Մանուչարյանը և Հայկ Երանոսյանը: Նիստը իրավազոր է: Կենդանի կատարմամբ հնչեց Հայաստանի Հանրապետության օրհներգը: Համայնքի ղեկավարը ընթերցեց օրակարգի հարցերը՝ ըստ հերթականության, այնուհետև օրակարգը հաստատելու մասին հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքում 23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 10-Ա)*

Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱԶՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԽՉԵՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ՋԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Կամո Հարոյանը _____